ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ 06-1/2022-2023
ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 24.02.2023թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի և Լ. Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Հանձնաժողովի կողմից 2022 թվականի նոյեմբերի 30-ին հարուցված «Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ» թիվ 06/2022 վարույթի նյութերը,

պարզեց.

1. 2022 թվականի նոյեմբերի 30-ին Հանձնաժողովը հարուցել է թիվ 06-2022 վարույթը ԱԺ պատգամավոր Էդուարդ Աղաջանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով:

2. 2022 թվականի նոյեմբեր-փետրվար ամիսների ընթացքում Հանձնաժողովը իրականացրել է վարույթի համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքների, ինչպես նաև գործում առկա նյութերի ուսումնասիրություն:

Էդուարդ Աղաջանյանի՝ «Էքսիփէդ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 02631194) կանոնադրական կապիտալի 50% բաժնեմասը 2021 թվականի մայիսի 10-ից հետո (2018 թվականի մայիսի 10-ին կնքված հավատարմագրային կառավարման մասին պայմանագրի գործողության ժամկետի ավարտը) հավատարմագրային կառավարման հանձնված լինելու հանգամանքը պարզելու նպատակով վարչական մարմինը անհրաժեշտ է համարում հարցում կատարել Արդարադատության

նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը:

3. «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական վարույթը կարող է երկարաձգվել, եթե փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

4. Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

2022 թվականի նոյեմբերի 30-ին ԱԺ պատգամավոր Էդուարդ Աղաջանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված թիվ 06/2022 վարույթի ժամկետը երկարացնել 30 օր ժամկետով՝ մինչև 2023 թվականի մարտի 27-ը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ